ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«28» 03 2024թ. N 4/Ն-8

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ստեփանյան Տիգրան ԱՁ -ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ ՄՍԾ ԳՀԽԾՁԲ-24/13

Մասնակից՝ Ստեփանյան Տիգրան ԱՁ

/ՀՎՀՀ՝ 49768817, գործունեության հասցե՝ Կարճիկյան 22ա, Վաղարշապատ, ՀՀ, հեռ. +37441132639 /

Միասնական սոցիալական ծառայության կարիքների համար ծրագրային ապահովման սպասարկման խորհրդատվական ծառայությունների գնման նպատակով 01.02.2024թ. հայտարարվել է ՄՍԾ ԳՀԽԾՁԲ-24/13 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին հայտ է ներկայացրել ԱՁ Տիգրան Ստեփանյանը: Գնահատող հանձնաժողովի 13.02.2024-ին կայացած նիստում ԱՁ Տիգրան Ստեփանյանի հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ՝ հրավերով սահմանված պահանջների նկատմամբ:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ հրավերով սահմանված կարգով հանձնաժողովի նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով և հնարավորություն է տրվալ մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հրավերով սահմանված ժամկետում ԱՁ Տիգրան Ստեփանյանը գնահատող հանձնաժողովին չի ներկայացրել հայտով ներկայացրած փաստաթղթերի՝ արձանագրված անհամապատասխանությունների շտկված ամբողջական տարբերակները:

Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով վերոգրյալը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների

Երևան 0010, Նալբանդյան 13, հեռ.՝ (374 10) 52 45 74
info@ssa.am , www.ssa.am

գործընթացի կազմակերպման» կարգի Հավելված N 1-ի 42-րդ կետով և հրավերի 1-ին մասի 8.10-րդ կետով, հրավերի 1-ին մասի 2.7 կետով սահմանված պահանջներով, հայտի գնահատման արդյունքների ամփոփման նիստում որոշել է ԱՁ Տիգրան Ստեփանյանի ներկայացրած հայտը գնահատել անբավարար և մերժել հայտը՝ ՄՄԾ ԳՀԽԾՁԲ-24/13 ծածկագրով հրավերի 8.10-րդ կետով սահմանված պահանջների համաձայն՝ հետևյալ հիմնավորմամբ. հայտը չի համապատասխանում ոչ գնային այմանների համար հրավերի 1-ին մասի 2.7 կետով սահմանված նվազագույն պահանջներին:

Ըստ այդմ՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի իրավակարգավորմամբ և հիմք ընդունելով ԱՁ Տիգրան Ստեփանյանի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցման փաստը՝ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացրել հրավերով նախատեսված շտկման ենթակա փաստաթղթերը, որը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում մասնակցի ստանձնված պարտավորության խախտում, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցման.

Որոշեցի՝

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ԱՁ Տիգրան Ստեփանյանին ներառելու համար դիմել լիազորված մարմին՝ համապատասխան գործընթացի կազմակերպման համար:

28.03.2024

X

ԱԳՆԵՍԱ ԱՂԱԲԱԲՅԱՆ

Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ Signed by: AGHABABYAN AGNESA 8004770010